

Անահիտի յառաջիկայ թիւի քրօնիկս, կը շատանամ հոս զէթ մատնանիչ բնելով երկտասարդ ու տաղանդաւոր չորս րանաստեղծներու հաւաքածուները որ վերջերս երեւցան, Սողոմոն Տարօնցիի Գարեբի Լեզեղը եւ Գեղամ Սարեանի Միջօրէն երեւանի մէջ, հատորներ ուր կը գտնենք քնարերգական ու մանաւանդ վիպերգական գեղեցիկ էջեր, եւ

Փարիզի մէջ՝ Բիւզանդ Թօփալեանի Արեւագալը, արդիաշունչ, խոհալից եւ նարտարածելի բերթութեան էջերու հաւաքածուն, եւ Ա. Սեմայի Զրահաւոր Գարուն հատորը, փունջ մը թարմ ու աղնիւ զգայնութենէ մը բնականօրէն ծնած քնարերգական սիրուն, քնքոյշ ծաղիկներու, որ ոչինչ ունին «զրահաւոր», բայց իրապէս գարնանային են:

Ա. 2.



« ԱՆԱՀԻՏ »-Ի ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՆ

Այս քիւով Անահիտ կը բեականոխէ իր նոր շրջանի եօթներորդ տարին: Մեծապէս շնորհակալ պիտի ըլլայինք մեր այն բաժանորդներուն ու դեռ չեն վնարած իրենց վեցերորդ (եւ ուսման և նոյն իսկ հինգերորդ) տարուան բաժնեգիրը, եթէ հաճեին ինչքան կարելի է շուտ

գրել մեզի կամ յանձնել մեր գործակալին իրենց բաժնեգիրը:

Շնորհակալ պիտի ըլլայինք նաեւ մեր գործակալներուն եթէ հաճեին քիչ մ'աւելի փութկոտութիւն ցոյց տալ բաժնեգիրներու գանձման գործին մէջ:

Ա. 2.